

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և օրն օրեկից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շաբաթ, մարտի 21-ին, ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին, Մոլորե կեղեկեղում, առաւօ-
տեան ժամը 12-ին, պատարագից յետոյ կատարվելու է հոգեհանգիստ ի յիշատակ հան-
գուցեալ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Դ Ա Ի Թ Ե Ա Ն Ի Ո Ւ Դ Ա Դ Ե Ա Ն Ի

որի մասին Կովկասի հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը յայտնում է ի դի-
տարութիւն հասարակութեան և ընկերութեան անդամների:

(Տ. Ն.) 1—2

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան ցուցահանդէս.—Ներքին Տեսչութիւնը. Հայոց բնակ ապագան. Ձուլակահար Նալբանդեանի կոնցէրտը. 1897 թի համառու-
տական ժողովրդագրութիւնը. Նամակ վարդա-
շապուհի. Նամակ Իրիկից. Նամակ Խմբագ-
րութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Կիւ-
րոնից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.
—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Շինդա-Ուստադ-Ուստա».

ԿՈՎԱՍՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մեր յայտնեցիք «Մշակի» մէջ, որ
միտք է ծագել եկող 1899 թվականին
կազմել կովկասեան ցուցահանդէս Թիֆ-
լիսում: Այդպիսի մի ցուցահանդէս շատ
նպատակաւարմար կը լինէր մի քանի տե-
սակէտներից: Նախ նա կը ներկայացնէր մեր
արդիւնագործութեան և կուլտուրայի պատ-
կերը տասնիններորդ դարի վերջում: Երկ-
րորդ նա ցոյց կը տար այն հասնաւորա-
կան առաջադիմութիւնը, որ արեւ է մեր
երկրիւր այս վերջին տասն տարիներում,
1889 թվականի ցուցահանդէսից յետոյ:
Երրորդ նա մի գեղեցիկ առիթ կը լինէր
նորից հրապարակի վրա դնելու մեր երկրի
արդիւնագործական զարգացման հարցերը,
և վերջապէս, նա նախապատրաստական մի
գործ կը լինէր կատարեալ կերպով ներ-
կայացնելու մեր երկրի արդիւնները Պա-
րիզի համաշխարհային ցուցահանդէսին, որ
տեղի պէտք է ունենայ 1900 թվականին:
Այսպիսի մի ցուցահանդէս պէտք է մօտ
լինի թէ մեր երկրի արդիւնագործներին,
թէ երկրի բարձր իշխանութեան, թէ քա-
ղաքային ինքնավարութեան գործողներին և
թէ Կուլտուրական ընկերութեան ան-
դամների սրտին: Նա այդ պատճառով նրա
իրագործութեան հոգը պէտք է բաժա-
նեն բոլոր հետաքրքրված անձինք և հիմ-
նարկութիւնները: Դրանց պէտք է կցել և
երկու միևնույնութիւնները, որոնք նոյնպէս

կուլմած են երկրի արդիւնագործութեան մա-
սին հոգալու, այն է երկրագործութեան և
ֆինանսների միևնույնութիւնները: Անցեալ
ցուցահանդէսի ժամանակ զանազան հիմ-
նարկութիւններ նպաստեցին ցուցահանդէ-
սի աջակցութեան: Նոյնը կարող է լինել և
այժմ, եթէ այն հիմնարկութիւնը, որ
յարմար է առնուով այդ գործի նախաձեռ-
նութիւնը, հմտութեամբ և լուրջ կերպով
ծրագրել իր գործողութիւնները և կարող
այն հիմնարկութիւնները, որոնց օգնու-
թիւնը կարևոր է և անհրաժեշտ:

Ցուցահանդէս կազմելու նախաձեռնու-
թիւնը իր վրա է վերցնում կովկասեան
Կուլտուրական ընկերութիւնը, որ իր
կանոնադրութեամբ իրաւունք և պարտա-
ւորութիւն ունի ուսումնասիրել և զեկա-
վարել Կովկասի գեղատնտեսական արդիւ-
նագործութիւնը: Այդ խնդրը արդէն
քննվում է ընկերութեան խորհրդի մէջ և
շուտով նա կը ներկայացնի ընդհանուր
ժողովի անդամներին: Անկասկած, պէտք
է խորհրդակցութեան և գործակցութեան
հրահրվելու և բոլոր այն հիմնարկութիւն-
ներին ներկայացնելիցները, որոնց աջակցու-
թիւնը անհրաժեշտ է գործի աջակցու-
թեան համար: Ցանկալի է, որ գոնէ այս
խնդրում տեղի չունենար մշտական անհոգ
և ծոյլ վերաբերմունք դէպի գործը և
յարուցած հարցը չը մատնվէր անշարժու-
թեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԲԵՄԻ ԱՊԱԳԱՆ

Ով հասկանում է թատրոնի մեծ և կրթիչ ազ-
դեցութիւնը, չէ կարող անտարբեր վերաբերվել
հայկական մշտական բեմի «լինելու կամ չը լի-
նելու» հարցին, որ այժմ ամբողջապէս կախված
է մեր դերասաններից: Բազմիկ թատրոնական
մասնագործը աւելի ընդարձակ ծառայ է ստա-

թեան միևնույնութեամբ մեղքերից: Այդքան հրաշալի
էր մեռած սուրբի կարողութիւնը:

Բոցուն մի օգնական էր ունէր, ինչպէս ունե-
նում են բոլոր իր նմանները, և մի սպիտակ էջ
որի օգնութեամբ էր դիմում, երբ պիտի այցելէր
հեռու տեղերում բնակվող հաւատացեալներին:
Մի բարեպաշտ, միշտ արթնող մարդ չէր կարող
իր անդամները շարժել բեմական կենդանու
պէս:

Տարիների ընթացքում աւելի մեծացաւ սրբա-
րանի և նրա պահապանի հուշակը: Մինչև անգամ
պատմում էին, թէ սուրբ մասունքի հրաշալի դո-
րութիւնը անցել է բոցունի վրա, և թէ շատ բա-
րեպաշտ ու հաւատացեալ ուխտաւորներ իրանց
ցաւերից բժշկվում են միայն ձերուհու երեսին
նայելով, կամ նրա հանդերձի ծայրին դիպելով:
Հաւատացեալները բերում էին աստուածների
համար գինի, թոյնանոց ու քաղցրեղէններ:
Խորանը միշտ լցված էր լինում նրանց նուէրնե-
րով: Երբ բոցուն և նրա օգնականը ուտում էին
բրինձից պատրաստած իրանց աղքատիկ ճաշը և
խմում աղբիւրի ջուրը, աստուածները զիծած
ժպտով նայում էին նրանց: Զարմանալի էր թէ
միջան շատ էին ուտում աստուածների պատկեր-
ները և ինչպէս ազատութեամբ սպառում էին
գոհներ: Մինչև անգամ փշրանքներ էլ չէին թող-
մէջ, որ չը լինի թէ իրանց ծառաներն էլ գոնէ
համը տեսնէին: Բայց, ի հարկէ, բոցուն հասա-
րակ մեղաւորների պէս ծարաւ չէր արեցնող

ցել այժմ. այդ մասնագործի նոր անդամները,
ինչպէս և հնարը, համաձայն են տանել գործը
նոյն իսկ դեֆիցիտով, միայն այն պայմանով,
որ դեֆիցիտը չանցնի որոշ սահմանից: Ուրեմն
եթէ մեր դերասանները մի քիչ չափաւորեն ի-
րանց պահանջները, հայկական բեմի ապագան
կարելի է ապահովված համարել: Իսկ դերասան-
ները պէտք է անպատճառ չափաւորեն իրանց
պահանջները, եթէ իսկապէս սիրում են բեմը,
եթէ, վերջապէս, հասկանում են իրանց շահերը:

Հարցը պարզ է: Հայ հասարակութիւնը տար-
վայ ընթացքում ցանկանում է կամ կարողա-
նում է մայ թատրոնին միայն որոշ չափով ե-
կամուտ: Մասնագործը աւելացնում է այդ ե-
կամուտի վրա մի քանի հազար ռուբլի և բաժա-
նելով դերասանների վրա նրանց արժէքի համա-
ձայն առաջարկում է նրանց վարձիկ այդ ու-
ճիկներով, որոնք աւելի պակաս են, քան այս
տարվայ ուժիկները: Բայց մեր դերասանները
զարմանալի թեթեամտութեամբ պահանջում են
ընդհանրապէս, որ իրանց ուժիկները աւելցնեն:
Ինչո՞ւ. ինչ նիւան վրա: Խաղալ ամիսը 5—8
անգամից աւելի նրանք չեն ցանկանում. և
զուրկ չեն էլ կարող, որովհետև որքան շատ
լինեն դերերը, անքան դուրս կը լինի սովորե-
լը, և վերջապէս, եթէ կարողանան էլ հասարա-
կութիւնը այդքան չի յաճախի թատրոն: Իրանց
ամբողջապէս դուրս դեր վերցնել նրանք չեն ու-
զուով և չը պէտք է վերցնեն: Պարզ է ուրեմն,
որ խումբը պէտք է բաղմամբ լինի և պէտք է
պահպանվի հասարակութեան տուած որոշ եկա-
մուտով, վրան աւելացնելով մասնագործի նու-
րած մի քանի հազարը: Կայ որոշ բաժանելի,
կայ որոշ բաժանարար, քանորդն էլ որոշ է,
բայց մեր դերասանները յամառութեամբ պա-
հանջում են, որ մասնագործը աւելցնի այդ
քանորդը: Ինչպէս երևում է, մեր դերասաննե-
րին հարկաւոր է հրաշագործ մի մասնագործ,
որ կարողանայ չը սահմանափակվի թուաբա-
նութեան պարտադրի կանոններով, կամ այնպիսի
մասնագործով, որ բաւական չը համարելով մի քա-
նի հազար դեֆիցիտը իր վրա վերցնել, վերցնի մի
քանի տասնեակ հազարների դեֆիցիտ: Այդպիսի
մասնագործ, ի հարկէ, չի գտնվի և մեր դերա-
սանների յամառութիւնը կունենայ միայն այն
հետեանց, որ հայկական մշտական բեմի դեր-
ված հիմքը կը քանդվի և նրանք կը սկսեն
գարծեալ առաջվայ պէս չափել, չափելի Կովկա-
սը հարաւոր հիւսիս և արեւելքից արեւմուտք յի-
չեցնելով Օտտոմանական «ՄԵՏԵ» կոմիտայի հերոս-
ներին: Իսկ այդ ցուպը կը լինի, շատ ցաւալի:
Մի տարվայ ապահով զբոսիւն և կանոնաւոր

խմելքն ու կարծիքը արդեւված կերակուրներին:
Չէ որ նա մի սուրբ էր և և երդումով հեռա-
բել է իրանից բոլոր ունայն բաները: Բայց բո-
ցուն իր սրբութեան ազդեցութեան տակ շարու-
նակ հաստատում էր, այն ինչ նրա օգնականը
օր օրի վրա ձեռքից գնում էր: Տարաբաղդա-
բար, մի կողմից էլ սով սկսվեց այն երկրում:
Բարեպաշտ մարդիկ այլ ևս չէին կարող ա-
ստուածներին նուէրներ բերել և երկուստարդ քա-
հանան, որին տրված չէր հրաշագործ գործիւն,
միշտ բարակելով կմախք էր դառնում, այն ինչ
ձերութիւն կերպած միւն էր նմանում:

Մի առաւօտ, երբ նրանք մեքենաբար կար-
դում էին աղօթքները, յանկարծ թուլութիւն ե-
կաւ օգնականի վրա և նա, մոռանալով իր ուխ-
տը, ձայն տուեց.

—Էլ չեմ կարող: Դու ինչպէս ես ամուս, որ
առանց ուտելու այդպէս հաստ ես:

Մի քանի րօպէ նրա գլխաւորը ապշած մնաց
և չը կարողացաւ խօսել: Յետոյ խիստ եղանա-
կով ասաց.

—Որդի, դու պիտի աւելի հաւատ ունենաս:
Օրը երեք անգամ դիպում եմ խորանի ետեւում
հանգչող սուրբի ոսկորներին, և նա պահում է
իմ ուժերը: Նամու Արիպ բուցու:

Երկուստարդ հոգևորականը մտա՛նց այս խօս-
քերի վրա և վճռեց իր վրա էլ փորձել սուրբ մա-
սունքների ներգործութիւնը: Նոյն օրը, կէսօրից
յետոյ, երբ մի քանի հիւանդ կանաք իրանց ցա-
ւերը պատմում էին նրա մեծաւորին, նա ծա-

խմում մասնակցելը արդէն իր բարերար հե-
տեանցն է ունեցել դերասանների մեծամասնու-
թեան վրա. եթէ այդպէս շարունակվի գործը,
կարելի է հաստատ առել, որ հայ դերասանները
կը ստեղծեն մի որոշ շիջալ, որոշ բեմական ա-
ւանդութիւններ և աստիճանաբար կը բարձրաց-
նեն իրանց պատիւը, որ դժբաղդաբար այնքան
էլ բարձր չէ հասարակութեան աչքում:

Տ. Յ.

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

(Նամակ Պետերբուրգից)

Մարտի 11-ին
Մարտի 10-ին, Կրեդիտային ընկերութեան
դահլիճում կայացաւ յայտնի ջութակահար Յով-
հանէս Նալբանդեանի կոնցէրտը: Ինչպէս միշտ,
այս անգամ էլ նրան պիտի նուագակցէր իր ան-
բաժան ակօմպանիատօր, պիանիստ Ա. Միկա-
չելովի: Կոնցէրտի սկիզբը պիտի լինէր ժամը
ուշիկը 8-ին: Անցել էր 1/2 ժամ և դեռ չէին
սկսում: Յանկարծ սենեակի դուռը բացվեց և
հանդիսականները առաջ յայտնվելով սպասաւոր-
ներից մէկը յայտարարեց, որ Միկաչելովի,
հիւանդութեան պատճառով, չէ կարող մասնակ-
ցել կոնցէրտին, այլ նրան կը փոխարինէ պիա-
նիստուհի Կուսկովան՝ առանց նախօրօք պարտա-
տութեան և փորձի: Այսպիսի մի անակնկալ
հանգամանք չէր կարող վատ չազդել երկուս-
տար ջութակահարի վրա: Սպասաւորի անհե-
տանալուց երկու րօպէ յետոյ բեմ բարձրացաւ
Կուսկովան և ապա, տիտուր ու արտուս, բոլոր-
վին դուռնաւթած, տաղանդաւոր վիրտուօզ-ճու-
թակահարը: Թաղային երկարատեւ ծափահարու-
թիւններ: Ակօմպանիստ անողը սկսել է, ար-
դէն նուագում է, բայց դեռ ժողովուրդը իր
ծափահարութիւններին վերջ չէ տալիս: Կոնցեր-
տանտը, կարծէք վիշտն ու թախիծը ձակարկն
դրուած, մի քանի անգամ դուրս խոնարհեցրեց
ողջունելով իր տաղանդը յարգող հանդիսական-
ներին, և աչքերը գետնին դրած, ընկաւ խոր
մտածմունքի մէջ: Կոնցերտի բարձրացնելը, որ
նշան էր, թէ պիտի սկսի նուագը, բոլորին լը-
ռեցրեց: Նուագեց նա Բէթհովենի «Կոնցէրտը»:
Սկզբում նա կարծէք կաշկանդված էր, դողդո-
ղում էր, չէր իմանում, թէ ում հետ է նուա-
գում, բայց կամայ-կամայ, կարծէք թէ հիացած,
գրաւված իր քաղցրահունչ ջութակի լարերից
բղտող կաղեցիկայի գեղեցկութիւնը, մուսկու-
լէ իրան, թէ նուագակցին և թէ հանդիսական-
ներին: Երկար պառաւալից յետոյ, նա շարունա-
կեց «Կոնցէրտը» միւս մասը: Այս անգամ արդէն
նա հերոսական կուր էր մղում ջութակի հետ

ծուկ գնաց, մօտեցաւ սուրբ դերեղմանին, ցան-
կի արանդով ձեռքը սկսեց և դիպաւ... մի կօ-
շի (դրումի շիշ), որովհետև ուխտաւորները ու-
նենում են իրանց հետ:

—Բարի աստուածներ, միմուսց նա.—ուս
սուրբի մատուցը պիտի լինի: Անկասկած սրա
հրաշալի բովանդակութիւնն է ոյժ տուել ուսուց-
չին, որ նա այնպէս դէր և կըր և երևում: Մեծ
չանք պիտանի եղած բանը չի փաստի փոքրիկ
չնիկին:

Երբ շարժվելով, մօտեցրեց իր սուր քիթին և
մտածեց. «Չէ կարող վնաս տալ, եթէ փորձեմ
այս սուրբ ջութը»:

Լի խորին յարգանքով, նա հեռացրեց փայտի
խցանը շիշի բերանից, դրեց շիշի բերանը իր
չորացած շրթունքների վրա, աչքերը փակեց և...
կաղեցիկեց: Գիշերը, կարծելով թէ ուսուցիչը
հանդիստ ընած է, տեղից վեր կացաւ և կամա-
ցուկ մօտեցաւ դերեղմանին: Նա կամեցում էր
կրկնել կէսօրին արած իր ջերմեւանդ աղօթքը,
բայց աւանդ տեսաւ որ բոցուն նստած է տախ-
տակի ցանկի մօտ, դատարկ կօշը ձեռքին բռնած:

—Որդի, ասաց ձերութիւն մուսլ եղանակով.—
տաճարի եկամուտները այլ ես բաւական չեն
երկուսիս համար, խոտը շարունակ պակասում
է, այնպէս որ մեր հաւատարմի անաւանն էլ
չուտով մեղ պէս բարակ կը լինի: Նրան էլ
վերցրու հեռու և դուս մի երկիր, ուր սով չը կայ:
Թոյլ տուր ինձ այստեղ իմ պաշտօնավարումս,
մոռնում:

